# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք,
0236 6 38 55 , zorakhamaynq@mail.ru

N 10-80
*02.08 2021թ.*

«Վանդաժի» ՍՊԸ-ի տնօրեն, պարոն Տ.Վիրաբյանին
*ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աբարբեկյան 133*

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

*«ԱՄԶՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին*

*Հարգելի՛ պարոն Վիրաբյան,*

Զորակի համայնքապետարանի և «Վանդաժի» ՍՊԸ-ի միջև (այսուհետ նաև՝ Կողմեր) 27.04.2021թ. կնքվել է «ԱՄԶՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Զորակ համայնքի Վ. Սարգսյան և Հ.Թումանյան փողոցները միացնող հատվածի և Տիգրան Մեծի թիվ 4 բնակելի տան բակով անցնող ջրատար առվի կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:»

*Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <u>60 օրացուցային օր:</u>*

Պայմանագրի 3.1.4 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

*բ) Կապալառուն խախտել է պայմանգրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):*

Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3 474 000 (երեք միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

Այսպիսով, Պայմանագրով նախատեսված աշխատանքների վերջնաժամկետ է հանդիսացել Պայմանագիրը ուժի մտնելուց՝ 27.04.2021թ. հետո 60-րդ օրացուցային օրը, այն է՝ 27.06.2021թ.:

29.06.2021թ. Կողմերի միջև ստորագրված հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության, ինչպես նաև թիվ 1 կատարողական ակտի համաձայն՝ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից Զորակի համայնքապետարանին է հանձնվել Պայմանագրով նախատեսված 3 474 000 ՀՀ դրամ արժողությամբ աշխատանքների միայն մի մասը՝ ընդհանուր 1 123 217 (մեկ միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտականության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը:»

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:»

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանգրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանգիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Հաշվի առնելով, որ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել Պայմանգրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Զորակ համայնքի Վ. Սարգսյան և Հ.Թումանյան փողոցները միացնող հատվածի և Տիգրան Մեծի թիվ 4 բնակելի տան բակով անցնող ջրատար առվի կատարված աշխատանքը, ուստի հիմք ընդունելով Պայմանգրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ Զորակի համայնքապետարանը միակողմանի լուծում է Զորակի համայնքապետարանի և «Վանդաժի» ՍՊԸ-ի միջև 27.04.201թ. կնքված «ԱՄԶՀ-ԳՀԱՇՁԲ-21/2» ծածկագրով գնման պայմանագիրը:

Միևնույն ժամանակ, Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

Պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Հիմք ընդունելով Պայմանագրի 6.2 և 6.3 կետը, հայտնում ենք, որ «Վանդաժի» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում ՀՀ Արարատի մարզի Զորակ համայնքի 900432600047 հաշվեհամարին փոխանցել 41138/քառասունմեկ հազար մեկ հարյուր

երեսունինը/ՀՀ դրամ՝ որպես տույժ, ինչպես նաև 17370/տասնյոթ հազար երեք հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ՝ որպես տուգանք:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի «Արտաշատ» մասնաճյուղին ներկայացվել է պահանջ՝ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով նախատեսված պայմանագրի ապահովման գումարը՝ 347 400 (երեք հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամը, ինչպես նաև «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տուժանքի՝ մասին համաձայնագրին կից վճարման պահանջագրով նախատեսված որակավորման ապահովման գումարը՝ 521 000 (հինգ հարյուր քսանմեկ հազար հարյուր) ՀՀ դրամը, Զորակ համայնքի 900432600047 հաշվեհամարին փոխանցելու վերաբերյալ:

Հարգանքով՝

Զորակի համայնքապետարանի ղեկավար ______________________ Մ. Մալոյան